Տ. ՓԱՌԵՆ ՔԱՀԱՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ՂԵՒՈՆԴՅԱՆՑ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՆԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

(05 փետրվարի, 2013թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Վեհափառ Տեր, Գերաշնորհ Սրբազան Հայրեր, Հոգեշնորհ, Արժանապատիվ եւ Բարեշնորհ եղբայրներ, սիրելի հայորդիներ,

Այսօր հերթական անգամ մենք միասին նշում ենք Ղեւոնդյանց Ս. քահանաների նվիրական տոնը: Բոլորս եւ յուրաքանչյուրս գիտենք հայոց պետության այն բովանդակալից եւ նվիրական ու սուրբ հատվածը, երբ ասպարեզ եկան Վարդանանց քաջերը եւ Ղեւոնդյանց սրբազան նահատակները: Քաջ գիտենք, թե ինչպես նրանք, բոցավառելով իրենց մեջ Քրիստոսի սերը, ոչ թե խաչի փոխարեն սուր վերցրեցին, այլ իրենց խաչերը սուր դարձրեցին եւ դուրս եկան կրոնը եւ սրբությունը անարգողների դեմ: Գիտենք պատմությունը եւ խոնարհվում ենք նրանց առջեւ:

Ինչպես ամեն տարի այս օրը, այժմ էլ, վերապրելով պատմությունը, ակամայից մենք ինքներս մեզ հարց ենք տալիս՝ ինչ արեցին Ղեւոնդյանց քահանաները, ինչ ցույց տվեցին ու ապացուցեցին, ինչ պատգամ տրվեց մեզ, ինչ է մեզանից իրավացիորեն պահանջվում:

Ղեւոնդյանց Ս. քահանաները ապացուցեցին, որ կարելի է նմանվել Քրիստոսին՝ կատարելով Տիրոջ՝ Երկնավոր Հոր նման կատարյալ լինելու պատվերը: Ղեւոնդյանց քահանաներն էին, որ իրենց արյունով ստեղծեցին «արժանապատիվ» պատվանունը, որը մենք՝ նվաստներս, մինչեւ այսօր կրում ենք՝ պարտավորվելով նվիրվել եւ սիրել մեր սրբազան երկիրը, Քրիստոսի Արյունով գնված Եկեղեցին եւ մեր բազմատանջ ժողովրդին: Ղեւնդյանց քահանաներն էին այն պարզ ճշմարտություն ապացուցողները, ըստ որի՝ համընդհանուր հարգանք եւ սեր վայելելու, եկեղեցուն, երկրին, ժողովրդին ծառայելու եւ վերջապես սրբանալու համար պետք է դուրս գաս ինքդ քեզնից, պետք է թույլ տաս, որ Ս. Հոգին բնակվի քո մեջ, պետք է ուրանաս քո անձը, վերցնես խաչդ եւ գնաս Քրիստոսի ետեւից (հմմտ. Մատթ. Ժ. 38): Տեղին է ասել Ս. Մակար Մեծը. «Եթե սիրում ես դու մարդկային փառքը, ցանկանում ես, որպեսզի խոնարհվեն քո առջեւ, քեզ հանգիստ ես փնտրում, ապա շեղվել ես ճանապարհից: Քեզ պետք է խաչվել Խաչվածի հետ, տառապել Տառապածի հետ, որպեսզի դրանից հետո նաեւ փառավորվես Փառավորվածի հետ (Հռոմ. Ը. 17)»:

Ղեւոնդյանք կյանքի զոհասեղանի վրա դրեցին իրենց ամենաթանկ բանը՝ կյանքը, այսօր մենք ինչ ենք դնում ի սպաս Հայ ժողովրդի եւ Հայ Եկեղեցու: Ե. Դարի այս նվիրական ժամանակահատվածում կար մեծ մարտահրավեր, եւ չուշացավ պատասխանը: Այժմ էլ կան մեծ մարտահրավերներ, որոնց պետք են պատասխաններ: Այսօր՝ ԻԱ.

դարում, ցավ ի սիրտ ամեն քայլափոխի հանդիպում ենք հայ քրիստոնյայի նկարագիրը խաթարող բազում հարձակումների՝ աղանդավորական կազմակերպությունների, ընտանիք քայքայող գաղափարախոսությունների, երեխաներին, պատանիներին եւ երիտասարդներին շեղող ներգործությունների: Այս ամենի հանդեպ մենք պարտավորվում եւ մի տեսակ երդում ենք տալիս վառել Քրիստոսի լույսի մոմերը՝ գիտակցելով, որ եթե կա սրվեր, առավելապես գոյություն ունի եւ ապրում է լույսը՝ հանձին Հայ Առաքելական Ս. Եկեղեցու: Եւ պայքարում ենք՝ կրկնելով Պողոս Առաքյալի խոսքը, որ ասում է. «Եթե Աստված մեր կողմն է, ո՞վ կլինի մեզ հակառակ» (Հռոմ. Ը. 31): Չէ՞ որ հենց Ղեւոնդ Երեցն է Եղիշե վարդապետի գրչի միջոցով մեզ ձայնում ու ասում. «...մենք մենակ չենք... չկա ոչ մի դատարկ տեղ, որտեղ չլինի մեր թագավոր Քրիստոսը»:

Մենք՝ քահանաներս, պարտավոր ենք առողջ եւ կանդանի պահել քրիստոնեական հավատքը եւ քրիստոնեական կյանքը՝ գիտակցելով, որ հայ հավատացյալը կարիք ունի Աստծու խոսքի, հայաբարբառ աղոթքի , արժեւորված եւ իմաստավորված Ավետարանի, հոգեւոր քարոզի եւ շարականի:

Գիտենք, որ հայ քահանան է եղել եւ է.

- Հային Եկեղեցու Սուրբ Ավազանի մեջ մկրտողն ու կնքողը,
- Հիվանդի վրա աղոթողը,
- Երիտասարդ զույգերի գլուխները սուրբ պսակով իրար կապողը,
- Հայի տունը հայկական ավանդական աղոթքով օրհնողը,
- Հայ ննջեցյալի վրա վերջին աղոթքը կարդարողը ու ողջ մնացածներին մխիթարողը,
- Հայ մարդու ուրախությունն ու տխրությունը հայրաբար բաժանողը,
- Հայ մանուկին «Տերունական աղոթք»-ը եւ խաչակնքվել սովորեցնողը,
- Օրհասական պահին զենք վերցնողը՝ նմանվելով Ղեւոնդյան սրբազան քահանաներին:

Այս ամենը հայ քահանան արել եւ անում է՝ գիտակցելով, որ քահանայությունը ոչ թե ասպարեզ է, այլ կոչում:

Այս պահը մեզ՝ քահանաներիս համար անդրադարձի, մտածելու պահ է. մտածելու, թե ի՞նչ ենք արել եւ ի՞նչ բացթողում ենք ունեցել, նաեւ աղոթելու եւ Աստծուց ուժ եւ օգնականություն խնդրելու պահ է:

Այս պահը, հայրեր եւ եղբայրներ, առավելապես ուխտ վերականգնելու պահ է: Ուրեմն՝ եկեք վերանորոգենք մեր ուխտը՝ հիշելով այն Ս. Մյուռոնը, որ ճակատներիս է դրոշմվել այս Ս. Սեղանի վրա: Եկեք եւս մեկ անգամ վերապրենք այն իրողությունը, որ բոլորս էլ այս Ս. Սեղանից ենք ծնունդ ու անուն առել: Ուխտենք անսասան պահել եւ ավելի արժեւորել ու ամրապնդել այն ընտանիքը, որ կոչվում է հոգեւորականաց դաս: Հայտնի եւ պարզ է, երբ ամուր եւ սիրով է ընտանիքը, իրենից լույս եւ ջերմություն է ճառագում: «...Եղբայրասիրության մեջ՝ միմյանց հանդեպ լիել գթասիրտ, պատիվ տալու մեջ՝ միմյանց գերազանցել», - ասում է Պողոս առաքյալը: Իսկ Վարդան Այգեկցին, դիմելով հոգեւորականներին, ասում է. «Պետք է միմյանց առավել լավը համարել, քան

սեփական անձը, եղբոր նկատմամբ մահու չափ սեր ունենալ, խոնարհությունը սիրով ընդունել, ինչպես Աստծուն, հպարտությունից փախչել, ինչպես սատանայից եւ շնորհ ու սեր սրանալ՝ միշտ եւ հանապազ փառավորելու Հորը, Որդուն եւ Սուրբ Հոգուն. ամեն»:

Ուխտի այս սրբազան օրը շնորհավորում եմ Արժանապատիվ եւ Հոգեշնորհ իմ հոգեւոր եղբայրներին: Սիրելի եղբայրնե՛ր, թող Աստված զորացնի ձեր սուրբ խաչերը, որպեսզի մշտապես զգաք մեր Քրիստոս Աստծու ներկայությունը:

Որդիական սիրով շնորհավորում եմ առաջնորդ Սրբազան Հայրերին: Սիրելի Սրբազան Հայրե՛ր, հայցում եմ Աստծու օգնականությունը, որպեսզի կարողանաք ձեզ հանձնված բանավոր հոտը մոտեցնել Քրիստոսին եւ Ս. Եկեղեցուն: Մենք մշտապես ձեզ զորակից ենք:

Վեհափառ Տեր, խոնարհվելով Ղեւոնդյանց քահանաների սուրբ հիշատակի առջեւ եւ խոնարհվելով Ձերդ Սրբության առջեւ՝ շնորհավորում եմ Ձերդ Սրբազնությանը այս նվիրական օրվա առթիվ, եւ մաղթում երկարօրյա քաջ առողջություն եւ հովվապետություն:

Աղոթում եմ, որ Քրիստոսի շնորհները շատանան բոլորիս մեջ, ինչպես Ղեւոնդյանց քահանաների մեջ էին, որպեսզի կարողանանք ապացուցել Տիրոջ խոսքերը, որ հնչում է մեր հոգիներում եւ ասում. «Դո՛ւք եք աշխարհի լույսը» (Մատթ. Ե. 14):

Ուզում եմ, հոգեւոր քաջությամբ զինված, Պողոս առաքյալի հետ հարց տալ եւ ասել. «Արդ՝ ո՞վ պիտի բաժանի մեզ Քրիստոսի սիրուց, տառապա՞նքը, թե՞ անձկությունը, թե՞ հալածանքը, թե՞ սովը, թե՞ մերկությունը, թե՞ վտանգները, թե՞ սուրը» եւ Պողոս առաքյալի պես էլ պատասխանել. «...վստահ եմ, թե ո՛չ մահը, ո՛չ կյանքը, ո՛չ հրեշտակները, ո՛չ իշխանությունները, ո՛չ այլ բաներ, որ այժմ կան, ո՛չ գալիքները եւ ո՛չ զորությունները, ո՛չ բարձրությունը, ո՛չ խորությունը եւ ո՛չ մի ուրիշ արարած չի կարող բաժանել մեզ Աստծու այդ սիրուց, որ կա Տեր Քրիստոս Հիսուսով» (Հռոմ. Ը. 35-37): Եւ Տիրոջ այն հարցին, թե «Ո՞ւմ ուղարկեմ, եւ կամ ո՞վ կգնա այդ ժողովրդի մոտ», Եսայի մարգարեի նման կարողանալ պատասխանել . «Ահավասիկ ես, ի՛նձ ուղարկիր» (Ես. Զ. 8):

Քրիստոսի սերը, Ս. Հոգու շնորհները եւ Հայր Աստծու բարեխնամությունը լինեն բոլորիս հետ. ամեն: